

«ԱՐԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

(2011թ. Տարեկան հաշվետվություն)



NATIONAL
MORTGAGE
COMPANY

| | |
|---------------------------------------|----|
| Ամփոփ ցուցանիշներ | 4 |
| Դիրքը | 5 |
| Իրադարձություններ | 6 |
| Ակտիվներ | 8 |
| Վարկեր | 10 |
| Պարտավորություն և կապիտալ | 15 |
| Շահույթ | 19 |
| Կադրային քաղաքականություն | 21 |
| Ռիսկերի կառավարում | 23 |
| Մոնիտորինգ | 27 |
| Ներքին հսկողություն | 30 |
| Բանկային հաշիվներ | 32 |
| Գործընկեր ֆինանսական հաստատություններ | 33 |

NATIONAL
MORTGAGE
COMPANY

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» վերաֆինանսավորող վարկային կազմակերպությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 2009 թվականի հունիսին, որպես փակ բաժնետիրական ընկերություն: Ընկերության միակ հիմնադիրն է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 16-ի թիվ 182 Ա որոշմամբ Ընկերությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում (գրանցման վկայական թիվ 26):

Ընկերության առաքելությունն է Հայաստանի հիփոթեքային շուկան դարձնել իրացվելի, կայուն և հասանելի:

Ընկերության նպատակն է հիփոթեքային շուկայում ստեղծել այնպիսի պայմաններ, որպեսզի վարկերը հասանելի լինեն բոլոր այն ընտանիքների համար, ովքեր ունեն միջին եկամուտ և հիփոթեքային վարկավորման միջոցով կարող են բարելավել իրենց բնակարանային պայմանները:

Ընկերության հեռանկարային նպատակն է համակցել բնարականային վերաֆինանսավորումը և կապիտալի շուկան՝ հիփոթեքային արժեթղթերի միջոցով, ինչը կաջակցի մեր նպատակներին ու առաքելությանը:

Կազմակերպության գրասենյակը գտնվում է Երևանում, Հանրապետության 22-7/1 հասցեում:

ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, համեմատությունը կատարված է 2010թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ)

| | | |
|---|----------|----------------------------------|
| Ընդհանուր ակտիվներ | + 64.7% | 17,047.4 մլն ՀՀ դրամ |
| Վերաֆինանսավորված վարկերի ընդհանուր ծավալ | + 95.9% | 17,113.6 մլն ՀՀ դրամ |
| - այդ թվում՝ Երևանից դուրս | + 101.2% | 4,181.3 մլն ՀՀ դրամ |
| Վերաֆինանսավորված վարկերի ընդհանուր քանակ | + 103.5% | 2,320 հապ |
| - այդ թվում՝ Երևանից դուրս | + 116.7% | 903 հապ |
| Ընդհանուր պարտավորություններ | + 84.1% | 8,431.4 մլն ՀՀ դրամ |
| Ընդհանուր կապիտալ | + 49.3% | 8,616.0 մլն ՀՀ դրամ |
| Կանոնադրական կապիտալ | + 48.7% | 8,180.0 մլն ՀՀ դրամ ¹ |
| Շահույթ | + 51.5% | 345.6 մլն ՀՀ դրամ ² |

Գործընկեր հաստատություններ

15 առևտրային բանկ,
3 վարկային կազմակերպություն

¹ 180 մլն ՀՀ դրամ ավելացել է 2010թ. շահույթից

² Շահույթի աճը հաշվարկված է 2010թ.-ի շահույթի նկատմամբ: 2009-2011թթ Ընկերության ֆինանսական շահույթը կազմել է 616 մլն ՀՀ դրամ

ԴԻՐՔԸ՝ 30 վարկային կազմակերպությունների միջև

| | 2009թ. | 2010թ. | 2011թ. |
|----------------------|--------|--------------|--------|
| | | Դիրքը | |
| ԱԿՏԻՎՆԵՐ | 5 | 2 | 1 |
| ԿԱՊԻՏԱԼ | 2 | 3 | 1 |
| ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | 1 | 1 | 1 |
| ՇԱՀՈՒՅԹ | 11 | 6 | 4 |
| ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ | 6 | 2 | 1 |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ | 6 | 4 | 3 |

ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշները և ըստ ցուցանիշների ռեյտինգավորումն մանրամասն ներկայացված է **Հավելված 1-ում**:

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **2011թ. փետրվարին** Ընկերությունը համագործակցեց ևս մեկ բանկի՝ «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի հետ:
- **2011թ. հունիսի 22-ին** տեղի ունեցավ Ընկերության տարեկան ժողովը, որի ընթացքում որոշվեց 2010թ. շահույթը՝ 191,878,800 ՀՀ դրամ բաշխել հետևյալ կերպ՝ 11,878,800 ՀՀ դրամ հատկացնել գլխավոր պահուստին և 180,000,000 ՀՀ դրամը ուղղել Ընկերության կանոնադրական կապիտալի համալրմանը:
- **2011թ. հունիսին** Ընկերությունը ստորագրեց 20 միլիոն Եվրո վարկային գծի պայմանագիր ՀՀ ԿԲ հետ՝ Գերմանական KfW բանկի կողմից ֆինանսավորվող «Հայաստանում բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում – երրորդ փուլ» ծրագրի իրականացման նպատակով:
- **2011թ. հոկտեմբերին** «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՓԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի (միակ բաժնետիրոջ) 2011 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 14Լ որոշման, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդի 2011թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 271Ա որոշման, Ընկերության տիպը (խումբը) փոփոխվել է վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպության (ՎՎԿ):
- **2011թ. նոյեմբերին** հաստատվեց Ընկերության «Իրացվելիության և տոկոսադրույքի ռիսկերի կառավարման կարգը», որի հիման վրա ստեղծվեց Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտե:
- **2011թ. նոյեմբերի 24-ին** «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում տեղի ունեցավ «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ պարտավորումների տեղաբաշխումը: Թողարկված պարտավորումների ամբողջ ծավալը (1 մլրդ ՀՀ դրամ) ամբողջությամբ տեղաբաշխվեց: Տեղաբաշխված պարտավորումների միջին եկամտաբերությունը կազմեց 9.3806%, իսկ սահմանային եկամտաբերությունը 9.6300%:


- **2011թ. դեկտեմբերին** «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ 100,000.00 դրամ անվանական արժեքով, 6 ամիս մարման ժամկետով, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի, 10,000 հազար անվանական զեղչարոկոսային պարտավորումները թույլատրվել են բորսայական առևտրին (Cbond) հարթակում:




ԱԿՏԻՎՆԵՐ

Հաշվետու ֆինանսական տարում նախորդ տարվա համեմատ Ընկերության ակտիվները աճել են **6,698,002 հզր. ՀՀ դրամով** կամ **64.7%-ով** կազմելով **17,047,374 հզր. ՀՀ դրամ**:

2009 - 2011թթ. Ընկերության ակտիվների աճը, ինչպես նաև հաշվետու տարվա արդյունքներով Ընկերության ակտիվների կառուցվածքը ներկայացված են ստորև բերված գծապատկերներում:




**Գծապատկեր 2. ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ
(31.12.2011թ. դրությամբ)**



Ինչպես և նախորդ տարիներին, Ընկերության ակտիվների կազմում գերակշռող մասնաբաժին ունեն ԳՖՀ-ին տրամադրված վարկերը, որոնց վերաբերյալ մանրամասները ներկայացված են հաջորդ բաժնում:

ՎԱՐԿԵՐ

2011թ.-ին 2010թ.-ի համեմատ հաշվետու ժամանակաշրջանում վարկային պորտֆելն աճել է **5,355,519³ հազար ՀՀ դրամով** կամ **59.7%-ով**, կազմելով 14,316,391 հազար ՀՀ դրամ: Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերության 18 (15 բանկեր և 3 վարկային կազմակերպություններ) գործընկեր ֆինանսական հաստատություններին տրամադրված վարկերի մնացորդը կազմում է **328 հարյուր վարկ, 14,231,654⁴ հազար ՀՀ դրամ** գումար:



Ընկերության կողմից տրամադրված վարկերի միջոցով ընդհանուր առմամբ վերաֆինանսավորվել է **2,320 հարյուր վարկ 17,113,600 հազար ՀՀ դրամ**


³ Ներառված են նաև հաշվեգրված տոկոսները, որը կազմում է 82.5 մլն ՀՀ դրամ

⁴ Ներառված չեն Ընկերության աշխատաիցներին տրամադրված վարկերի մնացորդը, որը կազմում է 2 մլն ՀՀ դրամ

ընդհանուր պայմանագրային գումարով: Վերաֆինանսավորված վարկերի միջին գումարը կազմել է **7.4 մլն ՀՀ դրամ**, միջին կշռված տոկոսադրույքը՝ **12.7** և միջին կշռված ժամկետը կազմել է **12.4 փարի**:

2011թ. ընթացքում ՀՀ հիփոթեքային շուկան աճել է ավելի քան 20%-ով, փարվա վերջի դրությամբ կազմելով մոտ 122.5 մլրդ ՀՀ դրամ⁵: Ընդհանուր հիփոթեքային վարկերի պորտֆելում ՀՀ դրամով տրամադրված վարկերը կազմել են 54%՝ 66.3 մլրդ ՀՀ դրամ (փարվա ընթացքում՝ նվազում մոտ 4 տոկոսային կետով): 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Ընկերության մասնաբաժինը ընդհանուր հիփոթեքային վարկերի պորտֆելում կազմել է 11.6%, իսկ միայն ՀՀ դրամով հիփոթեքների մեջ՝ 21.4%: Ընդ որում, Ընկերության մասնաբաժինը ՀՀ դրամով հիփոթեքային վարկերի մեջ նախորդ փարվա համեմատ աճել է մոտ 5 տոկոսային կետով:

2009 - 2011թթ. Ընկերության վարկային պորտֆելի դինամիկան, ինչպես նաև Ընկերության կողմից վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի դինամիկան ներկայացված են ստորև բերված գծապատկերներում:




⁵ Ար

Ընկերության կողմից 2009-2011թթ. վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերը ըստ նպատակի հետևյալն է (տվյալները ներկայացված են դիտարկվող ժամանակահատվածի վերջի դրությամբ)՝

- Ձեռքբերում՝ **1,335 հապ վարկ՝ 12,677.6 մլն դրամ**
- Վերանորոգում՝ **954 հապ վարկ՝ 4,024.8 մլն դրամ**
- Կառուցապատում՝ **29 հապ վարկ՝ 372.8 մլն դրամ**
- Վերաֆինանսավորում՝ **2 հապ վարկ՝ 38.4 մլն դրամ**


Ձեռքբերման և վերանորոգման վարկերի միջին մեծությունները կազմել են համապատասխանաբար **9.5 մլն և 4.2 մլն ՀՀ դրամ**։

Գծապատկեր 6. ՏՐԱՍՏԻՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ԾԱՎԱԼԸ ԸՍՏ ՆՊԱՏԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ



Ինչպես և նախորդ տարիներին, Ընկերության կողմից վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի գերակշռող մասը (ըստ ծավալների) տրամադրվել է Երևանում: 2009-2011թթ. ընթացքում ըստ մարզերի վարկերի բաշխվածությունը ունեցել է հետևյալ տեսքը (տվյալները ներկայացված են դիտարկվող ժամանակահատվածի վերջի դրությամբ).

- 2011թ.' Երևան 1,417 հափ վարկ (61%)՝ 12,932.3 մլն ՀՀ դրամ (76%), մարզեր 903 հափ վարկ (39%)՝ 4,181.3 մլն դրամ (24%),
- 2010թ.' Երևան 817 հափ վարկ (62%)՝ 7,419.2 մլն ՀՀ դրամ (76%), մարզեր 494 հափ վարկ (38%)՝ 2,322.3 մլն ՀՀ դրամ (24%)
- 2009թ.' Երևան 230 հափ վարկ (68%)՝ 1,967.6 մլն ՀՀ դրամ, մարզեր՝ 106 հափ վարկ (32%)՝ 437.5 մլն ՀՀ դրամ (18%):



ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ և ԿԱՊԻՏԱԼ

Հաշվետու տարում 2010թ. համեմատ Ընկերության պասիվները աճել են **6,698,002 հազ. ՀՀ դրամով**, կամ **64.7%-ով**, կազմելով **17,047,374 հազար ՀՀ դրամ**: Ընկերության պասիվների աճը պայմանավորված է եղել ինչպես Ընկերության պարտատոմսերի տեղաբաշխմամբ (**963,593 հազ. ՀՀ դրամ⁶**), վարկերի ներգրավմամբ (**2,881,629 հազ. ՀՀ դրամ**) աճով, այնպես և կապիտալի (**2,845,642 հազ. ՀՀ դրամ⁷**) աճով:

Ընկերության պարտավորությունները և կապիտալը 2009-2011թթ. ընթացքում ներկայացված է ստորև գծապատկերում (գծապատկերները կազմված են դիտարկվող ժամանակահատվածի վերջի դրությամբ).




NATIONAL
MORTGAGE
COMPANY

⁶ Ներառված է նաև հաշվեգրված տոկոսները, որը կազմում է 9 մլն ՀՀ դրամ

⁷ Կանոնադրական կապիտալի ավելացում 2 680 մլն ՀՀ դրամ, որից 180 մլն ներքին շարժ և շահույթի ավելացում 346 մլն ՀՀ դրամ

**Գծապատկեր 8. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ և ԿԱՊԻՏԱԼ
(հազ. ՀՀ դրամ)**



ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ

Վարկային գծեր

2009 թվականի դեկտեմբերին Ընկերությունը ՀՀ կառավարության կողմից իրականացվող ՀՀ հիփոթեքային վարկերի շուկայի վարկավորման ծրագրի շրջանակներում կնքեց **12 միլիարդ ՀՀ դրամ** ընդհանուր գումարի վարկային գծի պայմանագիր Գերմանա-Հայկական Հիմնադրամի հետ: Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ վարկային գծի օգտագործված մնացորդը կազմել է **4,507,000⁸ հազ. ՀՀ դրամ**, որը Ընկերությունը ամբողջությամբ օգտագործել է գործընկեր հաստատությունների կողմից տրամադրված հիփոթեքային վարկերը վերաֆինանսավորելու նպատակով: 2011թ.-ի ընթացքում Ընկերությունը ԳՀՀ-ի վարկային գիծը չի օգտագործել:

⁸ Ներառված է նաև հաշվեգրված տոկոսները, որը կազմում է 13.7 մլն ՀՀ դրամ

2011թ. հունիսին Ընկերությունը **20 միլիոն Եվրո** վարկային գծի պայմանագիր ՀՀ ԿԲ հետ՝ Գերմանական KfW բանկի կողմից ֆինանսավորվող “Հայաստանում բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում – երրորդ փուլ” ծրագրի իրականացման նպատակով: Մինչև 2011 թ. վերջ Ընկերությունը վարկային գծից օգտագործել է **2,885,584 հազ. ՀՀ դրամ**⁹, ծրագրի շրջանակներում վերաֆինանսավորելով 450 հիփոթեքային վարկ:

Պարտատոմսեր

Ելնելով իր առջև դրված հեռանկարային նպատակներից, Ընկերությունը 2011թ. իրականացրեց պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման առաջին փորձը: Պարտատոմսերի առաջին թողարկումը նպատակ էր հետապնդում ինչպես լրացուցիչ միջոցներ ներգրավել Ընկերության գործունեությունը ֆինանսավորելու համար, այնպես և ներկայացնել շուկային նոր ֆինանսական գործիք, ուսումնասիրել առկա պահանջարկը, ներդրողները նախապատվությունները՝ հետագա թողարկումները նախապատրաստելու և հաջողությամբ իրականացնելու համար: Առաջիկա տարիների ընթացքում Ընկերության նպատակն է իր գործունեության հիմնական մասը ֆինանսավորել պարտատոմսերի տեղաբաշխումներից ստացված միջոցների հաշվին:

2011թվականի նոյեմբերի 24-ին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում տեղի ունեցավ «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ պարտատոմսերի տեղաբաշխումը:

Որպես գնորդ տեղաբաշխմանը մասնակցեցին Բորսայի թվով 8 անդամներ: Տեղաբաշխման ընթացքում ներկայացված գնման հայտերի ընդանուր ծավալը

⁹ Ներառված է նաև հաշվեգրված տոկոսները, որը կազմում է 4 մլն ՀՀ դրամ

կազմեց 1,442,956,5 հազար ՀՀ դրամ, իսկ բավարարված գնման հայտերի ընդհանուր ծավալը՝ 954,723,2 հազար ՀՀ դրամ:


Պարտատոմսերի տեղաբաշխմամբ ներգրավված միջոցները Ընկերությունը օգտագործել է ԳՖՀ-ների կողմից տրամադրված հիփոթեքային վարկերը վերաֆինանսավորելու համար:

ԿԱՊԻՏԱԼ


Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերության ընդհանուր կապիտալը կազմել է **8,616,023 հազար ՀՀ դրամ**, աճելով 31.12.2010թ. համեմատ **2,845,642 հազար ՀՀ դրամով**: Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության կապիտալի աճը պայմանավորված է եղել ինչպես կանոնադրական կապիտալի ավելացումով, այնպես և Ընկերության շահույթով: Ընդ որում, կանոնադրական կապիտալի **2,680,000 հազար ՀՀ դրամ** ավելացումից **180,000 հազ ՀՀ դրամը** կատարվել է Ընկերության 2010թ. շահույթի հաշվին: Ընկերության 2011թ. զուտ շահույթը կազմել է՝ **345,642 հազ ՀՀ դրամ**:

Ընկերության կողմից 2009-2011թթ. ընթացքում վարկային գծերով և թողարկված պարտատոմսերով ներգրավված միջոցների դինամիկան, ինչպես նաև պասիվների կառուցվածքը 2011թ. վերջի դրությամբ ներկայացված է ստորև գծապատկերում:

**Գծապատկեր 9. ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱ
(մլն ՀՀ դրամ)**



Գծապատկեր 10. ՊԱՄԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ



ՇԱՀՈՒՅԹ

Հաշվետու տարվա արդյունքներով Ընկերության ֆինանսական շահույթը հարկումից հետո կազմել է **345,642 հազար ՀՀ դրամ**, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով **117,496 ՀՀ դրամով** կամ **51.5%-ով**:

Հաշվետու տարում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ Ընկերության տոկոսային և նմանատիպ եկամուտները աճել են **293,659 հազար ՀՀ դրամով** կամ **45.9%-ով**՝ կազմելով **934,126 հազար ՀՀ դրամ**: Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերության տոկոսային և նմանատիպ եկամուտներն ունեցել են հետևյալ կառուցվածքը.

- եկամուտ տեղաբաշխված վարկերից՝ **903,410 հազար ՀՀ դրամ**,
- եկամուտ տեղաբաշխված ժամկետային ավանդներից՝ **30,716 հազար ՀՀ դրամ**:


Հաշվետու տարում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Ընկերության ծախսերը աճել են **146,791 հազար ՀՀ դրամով**, կամ **41.4%-ով**՝ կազմելով **501,630 հազար ՀՀ դրամ**:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերության ծախսերը ունեցել են հետևյալ կառուցվածքը.

- տոկոսային ծախսեր՝ **391,545 հազար ՀՀ դրամ**:
- անձնակազմի գծով ծախսեր՝ **73,501 հազար ՀՀ դրամ**
- վարչական ծախսեր՝ **36,584 հազար ՀՀ դրամ**

2011թ.-ի համար Ընկերության շահութահարկը կազմել է **87,377 հազ. ՀՀ դրամ**:
2012թ. հունվարի 1-ից Ընկերությունը ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի

նախագահի որոշման համաձայն Ընկերության հարկային հաշվառումը իրականացվելու է խոշոր հարկ վճարողների հարկային տեսչությունում:



Ընկերության շահութաբերության ցուցանիշները կազմել են

ROA՝ ակտիվների շահութաբերություն՝ **2%**

ROE՝ կապիտալի շահութաբերություն՝ **4%**

Բարձր որակավորում ունեցող մասնագետները Ընկերության համար հանդիսանում են Ընկերության հաջողության գրավականներից մեկը և արտացոլում են Ընկերության չափանիշներն ու արժեքները:

Ելնելով վերը նշված սկզբունքից, հաշվետու տարվա ընթացքում Ընկերության աշխատակիցները մասնակցել են մի շարք մասնագիտական որակավորման բարձրացման դասընթացների և սեմինարների, որոնք են.

- Housing Finance Summer Academy 2011, Frankfurt am Main, Germany՝ մասնակցել են երկու աշխատակից,
- Ֆինանսաբանկային քոլեջ հիմնադրամ, «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ (IFRS)»՝ մասնակցել է մեկ աշխատակից,
- Ֆինանսաբանկային քոլեջ հիմնադրամ, «Ակտիվների և պարտավորությունների կառավարում»՝ մասնակցել են երկու աշխատակից,
- Cagamas Mortgage Refinancing Company, Malaysia՝ մասնակցել են երկու աշխատակից,
- Ֆինանսաբանկային քոլեջ հիմնադրամ, «IAS 12, Շահութահարկեր»՝ մասնակցել է մեկ աշխատակից,
- Ֆինանսաբանկային քոլեջ հիմնադրամ, «2011 թվականի ընթացքում հարկային օրենսդրության մեջ կատարված հիմնական փոփոխությունները, դրանց կիրառության առանձնահատկությունները և

հարկային հաշվառմանն ու վարչարարությանն առընչվող այլ հիմնահարցեր»՝ մասնակցել է մեկ աշխատակից,

- Ֆինանսաբանկային քուլեջ հիմնադրամ, «Ֆինանսական հաշվարկներ, ավանդային և վարկային գործառնություններ, եկամտաբերություն, ներդրումային գործառնությունների վերլուծություն»՝ մասնակցել է մեկ աշխատակից

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերության աշխատակիցների թիվը կազմել է 12 մարդ:

Ակտիվներ (17մլրդ) /աշխատակիցների քանակ (12) = 1.4 մլրդ ՀՀ դրամ

Զուր շահույթ (345 մլն)/աշխատակիցների քանակ (12) = 29 մլն ՀՀ դրամ



NATIONAL
MORTGAGE
COMPANY

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ընկերության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ընկերության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների ընդունելի հավասարակշռության և նվազագույնի հասցնել Ընկերության ֆինանսական վիճակի վրա ռիսկերի անցանկալի ազդեցությունները:

Ընկերությունը կարևորում է հետևյալ ռիսկերը.

- Վարկային ռիսկ,
- Իրացվելիության ռիսկ,
- Տոկոսադրույքի ռիսկ,
- Գործառնական ռիսկ:

Ռիսկերի պատշաճ մակարդակով կառավարման համար պատասխանատու է Ընկերության ղեկավարությունը: Իրացվելիության և տոկոսադրույքի ռիսկերի կառավարումը իրականացվում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեն (ԱՊԿԿ):

Վարկային ռիսկ

Ընկերության գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու/ոչ պատշաճ կատարելու հետ, որը Ընկերությանն կորուստներ կարող է պատճառել: Վարկային ռիսկը

Ընկերության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկվում:

Վարկային ռիսկի ամենօրյա կառավարումը իրականացվում է Ընկերության վարկերի հսկողության բաժնի կողմից: Վարկային ռիսկի կառավարումը իրականացվում է ԳՖՀ-ների գործունեության ընթացիկ մոնիտորինգի և պարբերաբար իրականացվող վերլուծությունների միջոցով: Հսկողության ընթացքում բացահայտվող ԳՖՀ-ների ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում կազմակերպությունը իրավունք ունի դադարեցնել համագործակցությունը, ինչպես նաև պահանջի վարկերի վաղաժամկետ մարում:

Ընկերությունը իր վարկային ռիսկը զսպելու նպատակով իր հետ համագործակցող հաստատությունների համար սահմանում է վարկի տրամադրման առավելագույն սահմանաչափեր:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ստանձնած պարտավորությունների չկատարելու հավանականությունն է, ինչի առաջացման պատճառ է հանդիսանում Կազմակերպության դրամական հոսքերի ժամկետային անհամապատասխանությունը և/կամ բավարար ծավալով իրացվելի ակտիվների բացակայությունը: Ընկերությունը իրացվելիության ռիսկը կառավարում է դրամական հոսքերի կառավարման և բարձր իրացվելի ակտիվներում ներդրումներ կատարելու միջոցով: Մասնավորապես, Ընկերության «Իրացվելիության և տոկոսադրույքի ռիսկերի կառավարման կարգի» համաձայն,

յուրաքանչյուր պահին Ընկերության բարձր իրացվելի ակտիվների և մինչև առաջիկա սահմանված վճարման ամսաթիվը դրամական հոսքերի հանրագումարը պետք է առնվազն բավարարի այդ վճարումը կատարելու համար: Եթե Ընկերության բարձր իրացվելի ակտիվները և ակնկալվող ներհոսքը բավարար չեն հերթական վճարումը կատարելու և միևնույն ժամանակ շարունակելու վարկավորումը, Ընկերությունը կարող է ժամանակավորապես դադարեցնել վարկավորումը (նվազեցնելու ծավալները) և կուտակել դրամական ներհոսքը հերթական վճարումը կատարելու նպատակով (ձևավորել մարման ֆոնդ): Իրացվելիության ռիսկի կառավարումը իրականացնում է ԱՊԿԿ, որի նիստերը գումարվում են առնվազն ամիսը մեկ:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը հանդիսանում է շուկայական ռիսկի տարատեսակ և իրենից ներկայացնում է տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխությունների հետևանքով վնաս կրելու (նախատեսվածից պակաս եկամուտ ստանալու) ռիսկը: Տոկոսադրույքի ռիսկի կառավարումը իրականացնում է ԱՊԿԿ-ն: Տոկոսադրույքի ռիսկի կառավարման նպատակով Ընկերությունը ձգտում է համապատասխանեցնել իր տեղեքաշխված և ներգրավված միջոցների մարումները ժամկետները, ինչպես նաև իրավունք ունի երեք տարին մեկ վերանայել իր կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքները: Ռիսկի նվազեցման նպատակով Ընկերության «Իրացվելիության և տոկոսադրույքի ռիսկերի կառավարման կարգով» սահմանափակվում է տոկոսադրույքի փոփոխությանը զգայուն ակտիվներում ներդրումների չափերը:

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը պայմանավորված է Ընկերության անձնակազմի ոչ համարժեք հմտության կամ սխալ գործողություններով, ընթացիկ աշխատանքի կազմակերպման և կատարման թերություններով, սարքավորումների տեխնիկական անսարքությամբ, ընթացակարգերի անկատարությամբ, ինչպես նաև արտաքին ծառայությունների թերացմամբ: Գործառնական ռիսկը նվազագույնի հասցնելու նպատակով Ընկերությունում փաստաթղթավորված կերպով նկարագրված են գրեթե բոլոր բիզնես գործընթացները, կազմված են ներքին իրավական ակտեր, սահմանված են համապատասխան սահմանաչափեր, կիրառվում են կրկնակի ստուգման/հաստատման սկզբունքները, սահմանված են հաշվետվությունների տեսակները և պարբերականությունները:

Ներքին հաշվետվողականություն

Ներքին հաշվետվողականությունը հանդիսանում է ռիսկերի կառավարման կարևորագույն բաղադրիչը: Ընկերությունում ներկայումս գործարկվում են մեկ տասնայկից ավելի ներքին հաշվետվություններ, որոնք սահմանված ժամկետներում պատրաստվում և տրամադրվում են Ընկերության ղեկավարությանը, ԱՊԿԿ անդամներին և որոնց հիման վրա կայացվում են ռիսկերի կառավարման որոշումները: Ընկերությունը մշտապես միջոցառումներ է ձեռնարկում կատարելագործելու և ավտոմատացնելու Ընկերության ներքին հաշվետվողականությունը:

Իր կողմից վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի պորտֆելի որակը բարձր մակարդակի վրա պահելու, ինչպես նաև վարկային ռիսկը նվազեցնելու նպատակով Ընկերությունը պարբերաբար մոնիտորինգ է իրականացնում ԳՖՀ-ների կողմից տրամադրված վարկերի և ԳՖՀ-ների գործունեության նկատմամբ: Ընկերությունը ԳՖՀ-ների ընթացիկ մոնիտորինգ սկսել է իրականացնել 2010թ. սկզբից, իսկ վերաֆինանսավորված վարկերի նկատմամբ՝ 2010թ. նոյեմբեր ամսից, երբ արդեն իսկ անցել էր մեկ տարի Ընկերության առաջին վերաֆինանսավորված վարկերի տրամադրումից: 2011թ.-ի առաջին եռամսյակում, արդեն իսկ ունենալով որոշակի փորձ, Ընկերության կողմից մշակվեց և նույն թվականի մայիսին Ընկերության Խորհրդի կողմից հաստատվեց «Մոնիտորինգի կարգը», որը սահմանում էր ԳՖՀ-ների և հիփոթեքային վարկերի նկատմամբ իրականացվող մոնիտորինգի մեթոդաբանությունը, կարգը և ժամկետները:

ԳՖՀ-ների նկատմամբ մոնիտորինգը իրականացվում է ԳՖՀ-ների կողմից եռամսյակային կտրվածքով հրապարակվող հաշվետվությունների ուսումնասիրության հիման վրա և նպատակ ունի վաղ բացայտել ԳՖՀ-ի ֆինանսական վիճակի վատթարացումը, ինչպես նաև հետևել, որ ԳՖՀ-ները չխախտեն Ընկերության կողմից սահմանված առավելագույն սահմանաչափ/ընդհանուր կապիտալ հարաբերակցությունը:

Վերաֆինանսավորված վարկերի մոնիտորինգի ընթացքում.

- Ուսումնասիրվում են ԳՖՀ-ների կողմից ներքին մոնիտորինգի իրականացման կարգն ու արդյունքները,

- Ուսումնասիրվում է վարկերի նպատակայնությունը (այս նպատակով ընտրանքային եղանակով կատարվում են նաև այցելություններ վարկառուների բնակարաններ կամ բնակելի տներ),
- Ստուգվում է ապահովագրական վկայագրերի գործողության ժամկետները/վերականգման փաստը,
- Վարկային քաղվածքների միջոցով ուսումնասիրվում է վարկառուների պարտաճանաչությունը և վարկերի ռիսկի դասը,
- Պատահական ընտրանքի եղանակով ստուգվում է վարկային փաթեթներում առկա փաստաթղթերի համապատասխանությունը Ընկերության և ԳՖՀ-ի աշխատակիցների կողմից երկկողմ ստորագրված փաստաթղթերի ստուգման ակտերի/ցանկերի հետ,
- Ընտրանքային եղանակով հաշվարկվում են ՄԵ (PTI), ԸՊԵ (OTI) և Վ/Գ (LTV) գործակիցները ըստ հիմնավորող փաստաթղթերի:

Ըստ անհրաժեշտության կատարվում են նաև այլ ուսումնասիրություններ՝ կապված վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի առանձնահատկությունների հետ:

Ընդհանուր առմամբ, 2011թ. ընթացքում իրականացվել է 14 ԳՖՀ-ների հիփոթեքային վարկերի մոնիտորինգ (ընդհանուր՝ 668 վարկ, մոտ 5 մլրդ ՀՀ դրամ): Արդյունքում, 13 վարկ (մոտ 70 մլն ՀՀ դրամ) գնահատվել է որպես ոչ որակավորված (հիմնականում՝ երկրորդ տարվա ապահովագրական պոլիսի բացակայություն և/կամ ոչ նպատակյին օգտագործում) և այդ վարկերի գումարի չափով ԳՖՀ-ները հետ են վճարել Ընկերությանը: Շատ դեպքերում, կատարված մոնիտորինգների արդյունքում ԳՖՀ-ները, ընդունելով Ընկերության առաջարկությունները, կատարել են ներքին ընթացակարգային բարեփոխումներ, ինչպես օրինակ վարկերի նպատակային օգտագործումը

ստուգելու և փաստաթղթավորելու, այնպես էլ ապահովագրական վկայագրերի վերականգնման գործընթացի հետ կապված:

ԳՖՀ-ների կողմից իրականացվող մոնիտորինգը ուժեղացնելու նպատակով, Ընկերությունը կատարել է որոշակի փոփոխություններ «Հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման» կարգում: Մասնավորապես, վարկերի ընթացիկ մոնիտորինգի մասով պարտադիր է դարձել բոլոր վարկերի մոնիտորինգը առաջին մեկ տարվա ընթացքում: Իսկ վերանորոգման նպատակով տրամադրված վարկերի գծով պարտադիր է հանդիսանում մոնիտորինգի ընթացքում լուսանկարների կամ տեսահոլովակների կցումը եզրակացությանը: Մշակվել է նաև մոնիտորինգի եզրակացության օրինակելի ձև, որն ակնկալում է հիփոթեքային վարկի վերաբերյալ ամբողջական պատկերի ստացում մոնիտորինգի իրականացման ամսաթվի դրությամբ¹⁰:



¹⁰ Նշված փոփոխությունները ուժի մեջ են մտել 2012թ. փետրվարի 1-ից:

Ներքին հսկողության համակարգը Ընկերության համար հանդիսանում է ռիսկերի կառավարման կարևորագույն տարր: Ընկերությունը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում ներքին հսկողության համակարգի շարունակական զարգացման գործընթացին: Ներքին հսկողության համակարգի արդյունավետ գործունեությունը ապահովում է Ընկերության՝

- մատուցվող ծառայությունների, կատարվող գործառնությունների արդյունավետությունը,
- գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական ակտերին, ինչպես նաև Ընկերությունում գործող ներքին իրավական ակտերի պահանջներին,
- գործունեությանը բնորոշ ռիսկերի բացահայտումը, գնահատումն ու շարունակական կառավարումը.
- ֆինանսական և այլ հաշվետվությունների արժանահավատությունն ու ամբողջականությունը:

Ընկերության ներքին հսկողության համակարգը գործում է անընդհանրության սկզբունքի և անկախ գնահատման սկզբունքի հիման վրա, որը իրականացվում է ինչես ներքին (ղեկավարություն, աշխատակիցներ), այնպես և վերստուգողի և արտաքին աուդիտ կողմից: Հաշվետու տարում ներքին աուդիտի/վերստուգողի կողմից Ընկերությունում իրականացվել է ընդհանուր ստուգումներ և իրականացվել է առանձին ոլորտների ուսումնասիրություններ, հետևյալ ուղղություններով.

- Գործող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին Ընկերության գործունեության համապատասխանության գնահատում,

ներքին հսկողության համակարգի և ռիսկերի կառավարման արդյունավետության գնահատում,

- Հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության և ամբողջականության գնահատում,
- Ընկերության կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների ըստ ոլորտների ստուգում,
- Կատարված գործարքների, դրանց հաշվապահական ձևակերպումների և փաստաթղթերի համապատասխանության ստուգում,
- Ընկերության տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի նկատմամբ հսկողություն,
- ”Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին” ՀՀ օրենքի, նշված օրենքի հիման վրա ընդունված իրավական և Բանկի ներքին ակտերի պահանջների կատարման հսկողություն:

Նշված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքների ամփոփումն ու վերլուծությունը նպատակաուղղվել են բացահայտված թերությունների վերացմանը, ռիսկերի կանոնակարգմանը, կանխարգելիչ միջոցառումների մշակմանը:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԸ ՀՀ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Ընկերության հիմնական գործունեության համար հաշիվը բացված է ՀՀ Կենտրոնական բանկում: Ընկերությունը նաև ունի բացված դրամային և դեպո հաշիվներ ՀՀ այլ բանկերում:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

103006000683 (ԴՐԱՄ)

“ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ” ՓԲԸ

1150005972250100 (ԴՐԱՄ)

1150041300353 (ԴԵՊՈ)

“ԱՐԱՐԱՏ ԲԱՆԿ” ԲԲԸ

1510006979050100 (ԴՐԱՄ)

1510041300473 (ԴԵՊՈ)

“ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ” ՓԲԸ

NATIONAL
MORTGAGE
COMPANY

1930036293860100 (ԴՐԱՄ)

ԳՈՐԾԸՆԿԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|--------------------------------------|----------------------|
| ԳՖՀ (բանկեր) | ԳՎՊ կնքման ամսաթիվ |
| “ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ” ՓԲԸ | 06 հուլիսի 2009թ. |
| “ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ գազպրոմբանկի խումբ” ՓԲԸ | 17 հուլիսի 2009թ. |
| “ԱՐԱՐԱՏԲԱՆԿ” ԲԲԸ | 23 հուլիսի 2009թ. |
| “Հայէկոնոմբանկ” ԲԲԸ | 07 օգոստոսի 2009թ. |
| “Արցախ Բանկ” ՓԲԸ | 13 օգոստոսի 2009թ. |
| “Անելիք Բանկ” ՓԲԸ | 14 օգոստոսի 2009թ. |
| “ՎՏԲ հայաստան Բանկ” ՓԲԸ | 29 սեպտեմբերի 2009թ. |
| “Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան” ՓԲԸ | 22 հոկտեմբերի 2009թ. |
| “Արդշինինվեստբանկ” ՓԲԸ | 23 հոկտեմբերի 2009թ. |
| “Ինեկո Բանկ” ՓԲԸ | 17 նոյեմբերի 2009թ. |
| “Բիբլոս Բանկ Արմենիա” ՓԲԸ | 22 դեկտեմբերի 2009թ. |
| “Զարգացման Հայկական Բանկ” ԲԲԸ | 14 ապրիլի 2010թ. |
| “Կոնվերսբանկ” ՓԲԸ | 21 մայիսի 2010թ. |
| “Յունիբանկ” ՓԲԸ | 15 հոկտեմբերի 2010թ. |
| “Արմավիսբանկ” ՓԲԸ | 24 փետրվարի 2011թ. |

| | |
|---------------------------------------|----------------------|
| ԳՖՀ (վարկային կազմակերպություններ) | ԳՎՊ կնքման ամսաթիվ |
| “Առաջին հիփոթեքային Ընկերություն” ՍՊԸ | 28 սեպտեմբերի 2009թ. |
| “Գլոբալ Կրեդիտ” ՈՒՎԿ ՓԲԸ | 30 սեպտեմբերի 2009թ. |
| “Էքսպրես Կրեդիտ” ՍՊԸ | 21 հունվարի 2010թ |



ՀՀ վարկային կազմակերպությունների ցուցանիշները և ըստ ցուցանիշների ռեյտինգավորումն 31.12.2011թ. դրությամբ

| ՇԱՐՈՒՅԹ | | | Ընդհանուր կապիտալ | | | Կանոնադրական կապիտալ | | | ԱԿՏԻՎՆԵՐ | | | ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ | | |
|---------|---------------------------------------|----------------------------|-------------------|---------------------------------------|----------------------------|----------------------|---------------------------------------|----------------------------|----------|---------------------------------------|----------------------------|--------------------|---------------------------------------|----------------------------|----------------------|---------------------------------------|----------------------------|
| N | Անվանումը | Մնացորդը 31/12/ 2011 | N | Անվանումը | Մնացորդը 31/12/2 011 | N | Անվանումը | Մնացորդը 31/12/2 011 | N | Անվանումը | Մնացորդը 31/12/2 011 | N | Անվանումը | Մնացորդը 31/12/2 011 | N | Անվանումը | Մնացորդը 31/12/2 011 |
| 1 | ԱՐԵԳԱԿ ՈՒՎԿ | 1,577,811 | 1 | ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՎԿ | 8,616,023 | 1 | ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՎԿ | 8,180,000 | 1 | ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՎԿ | 17,047,374 | 1 | ՖԻՆՔԱ ՈՒՎԿ | 12,597,418 | 1 | ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՎԿ | 14,316,391 |
| 2 | ՆՈՐՎԻԿ ՈՒՎԿ | 627,874 | 2 | ԱՐԵԳԱԿ ՈՒՎԿ | 8,243,614 | 2 | ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՆԵՐԻՆ ՈՒՎԿ ՓԲԸ | 6,641,672 | 2 | ՆՈՐՎԻԿ ՈՒՎԿ | 16,239,155 | 2 | ՆՈՐՎԻԿ ՈՒՎԿ | 9,685,072 | 2 | ՖԻՆՔԱ ՈՒՎԿ | 13,479,881 |
| 3 | ՖԻՆՔԱ ՈՒՎԿ | 616,861 | 3 | ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՆԵՐԻՆ ՈՒՎԿ ՓԲԸ | 6,789,869 | 3 | ՆՈՐՎԻԿ ՈՒՎԿ | 5,614,029 | 3 | ՖԻՆՔԱ ՈՒՎԿ | 15,320,199 | 3 | ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՎԿ | 8,431,351 | 3 | ԱՐԵԳԱԿ ՈՒՎԿ | 9,586,490 |
| 4 | ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՎԿ | 345,642 | 4 | ՆՈՐՎԻԿ ՈՒՎԿ | 6,554,083 | 4 | ԱՐԵԳԱԿ ՈՒՎԿ | 3,445,000 | 4 | ԱՐԵԳԱԿ ՈՒՎԿ | 11,593,706 | 4 | ԱԳՔԱ ԼԻԶԻՆԳ | 5,411,036 | 4 | ՆՈՐՎԻԿ ՈՒՎԿ | 9,390,646 |
| 5 | ԷՔՍՊՐԵՍ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ | 343,687 | 5 | ԱԳՔԱ ԼԻԶԻՆԳ | 2,737,316 | 5 | ՖԻՆՔԱ ՈՒՎԿ | 1,364,720 | 5 | ԱԳՔԱ ԼԻԶԻՆԳ | 8,148,352 | 5 | ԲԼԵՍՍ ՈՒՎԿ | 4,591,885 | 5 | ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՆԵՐԻՆ ՈՒՎԿ ՓԲԸ | 4,592,531 |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|----|--|-------------|----|--|---------------|----|--|---------------|----|--|---------------|----|--|---------------|----|--|---------------|
| 6 | ԱԳՐԱ ԼԻԶԻՆԳ | 342,56 2 | 6 | ՖԻՆՔԱ ՈՒՎԿ | 2,722,7 81 | 6 | ԱԳՐԱ ԼԻԶԻՆԳ | 1,175,2 15 | 6 | ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՆԵՐԻՆ ՈՒՎԿ ՓԲԸ | 6,820,0 37 | 6 | ՍԵՖ ԻՆՏԵՐՆԵՅՑ ԵՆԼ ՈՒՎԿ | 4,266,9 04 | 6 | ՍԵՖ ԻՆՏԵՐՆԵՅՑ ԵՆԼ ՈՒՎԿ | 4,482,6 49 |
| 7 | ԲԼԵՍՍ ՈՒՎԿ | 289,76 2 | 7 | ԷՔՍՊՐԵՍ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ | 1,734,2 06 | 7 | ՓՍՁ ՆԵՐՈՂՈՒՄՆԵ Ր ՈՒՎԿ | 1,150,5 00 | 7 | ԲԼԵՍՍ ՈՒՎԿ | 5,480,9 65 | 7 | ԱՌԱՋԻՆ ՀԻՓՈԹԵՔԱ ՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅ ՈՒՆ ՈՒՎԿ | 3,746,2 04 | 7 | ԲԼԵՍՍ ՈՒՎԿ | 4,353,6 78 |
| 8 | ԱՌԱՋԻՆ ՀԻՓՈԹԵՔԱ ՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅ ՈՒՆ ՈՒՎԿ | 129,27 6 | 8 | ՓՍՁ ՆԵՐՈՂՈՒՄՆԵ Ր ՈՒՎԿ | 1,296,4 43 | 8 | ՍԵՖ ԻՆՏԵՐՆԵՅՑ ԵՆԼ ՈՒՎԿ | 975,37 2 | 8 | ՍԵՖ ԻՆՏԵՐՆԵՅՑ ԵՆԼ ՈՒՎԿ | 5,342,5 57 | 8 | ԱՐԵԳԱԿ ՈՒՎԿ | 3,350,0 91 | 8 | ԱՌԱՋԻՆ ՀԻՓՈԹԵՔԱ ՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅ ՈՒՆ ՈՒՎԿ | 4,088,5 36 |
| 9 | ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՆԵՐԻՆ ՈՒՎԿ ՓԲԸ | 124,37 3 | 9 | ՍԵՖ ԻՆՏԵՐՆԵՅՑ ԵՆԼ ՈՒՎԿ | 1,075,6 53 | 9 | ԱՌԱՋԻՆ ՀԻՓՈԹԵՔԱ ՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅ ՈՒՆ ՈՒՎԿ | 730,00 0 | 9 | ԱՌԱՋԻՆ ՀԻՓՈԹԵՔԱ ՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅ ՈՒՆ ՈՒՎԿ | 4,620,4 59 | 9 | ՓՍՁ ՆԵՐՈՂՈՒՄՆԵ Ր ՈՒՎԿ | 3,067,4 74 | 9 | ԳԼՈՒԲԱԼ ԿՐԵՂԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ | 3,063,0 00 |
| 10 | ԳԼՈՒԲԱԼ ԿՐԵՂԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ | 122,40 2 | 10 | ԲԼԵՍՍ ՈՒՎԿ | 889,08 0 | 10 | ԷՔՍՊՐԵՍ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ | 660,00 0 | 10 | ՓՍՁ ՆԵՐՈՂՈՒՄՆԵ Ր ՈՒՎԿ | 4,363,9 17 | 10 | ԳԼՈՒԲԱԼ ԿՐԵՂԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ | 2,749,6 71 | 10 | ՓՍՁ ՆԵՐՈՂՈՒՄՆԵ Ր ՈՒՎԿ | 2,971,1 89 |
| 11 | ՓՍՁ ՆԵՐՈՂՈՒՄՆԵ Ր ՈՒՎԿ | 101,67 8 | 11 | ԱՌԱՋԻՆ ՀԻՓՈԹԵՔԱ ՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅ ՈՒՆ ՈՒՎԿ | 874,25 5 | 11 | ՔԱՐԴ Ազրոկրեդի տ ՈՒՎԿ | 604,50 0 | 11 | ԳԼՈՒԲԱԼ ԿՐԵՂԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ | 3,307,9 89 | 11 | ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ ՈՒՎԿ | 2,512,0 62 | 11 | ԷՔՍՊՐԵՍ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ | 2,602,8 12 |
| 12 | ԱՐՖԻՆ | 87,316 | 12 | ՔԱՐԴ Ազրոկրեդի տ ՈՒՎԿ | 712,18 7 | 12 | ԳԱՈՆԻ ԻՆՎԵՍՏ ՈՒՎԿ | 530,00 0 | 12 | ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ ՈՒՎԿ | 3,028,8 78 | 12 | ՄԱԼԱԹԻԱ ՈՒՎԿ | 1,860,9 56 | 12 | ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ ՈՒՎԿ | 2,489,7 51 |
| 13 | ԳԼԱՋՈՐ ՈՒՎԿ | 78,079 | 13 | ԳԼԱՋՈՐ ՈՒՎԿ | 698,28 1 | 13 | ԳԼԱՋՈՐ ՈՒՎԿ | 500,01 5 | 13 | ԷՔՍՊՐԵՍ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ | 2,969,5 56 | 13 | ՆՈՐ ՀՈՐԻՋՈՆ ՈՒՎԿ | 1,718,6 99 | 13 | ՄԱԼԱԹԻԱ ՈՒՎԿ | 1,960,8 34 |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|--------|---|--------|--------|--|-------------|--------|--|-------------|--------|--|---------------|--------|---|---------------|--------|---|---------------|
| 1 4 | ԱԳՐՈ ԼԻԶԻՆԳ | 70,353 | 1 4 | ԳԱՈՆԻ ԻՆՎԵՍ ՈՒՎԿ | 627,91 4 | 1 4 | Ֆիդես Հիփոթեքայ ին Ընկերություն ն ՈՒՎԿ | 500,00 0 | 1 4 | ՆՈՐ ՀՈՐԻՁՈՆ ՈՒՎԿ | 2,198,2 61 | 1 4 | ԳԱՈՆԻ ԻՆՎԵՍ ՈՒՎԿ | 1,535,3 91 | 1 4 | ՆՈՐ ՀՈՐԻՁՈՆ ՈՒՎԿ | 1,945,9 17 |
| 1 5 | ԷԿՈՒՄԵՆԻԿ ԵԿԵՂԵՑԱԿԱ Ն ՓՈՒՍԱՏՎԱԿ ԱՆ ՖՈՆԴ ՈՒՎԿ | 66,539 | 1 5 | ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ | 558,31 8 | 1 5 | ՋԻ ԸՆԴ ԷՅ ՈՒՎԿ ՍՊԸ | 465,00 0 | 1 5 | ԳԱՈՆԻ ԻՆՎԵՍ ՈՒՎԿ | 2,163,3 05 | 1 5 | ԷՔՍՊՐԵՍ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ | 1,235,3 50 | 1 5 | ՔԱՐԴ Ազրոկրեդի տ ՈՒՎԿ | 1,660,6 49 |
| 1 6 | ՍԵՖ ԻՆՏԵՐՆԵՅՇ ԵՆԼ ՈՒՎԿ | 63,890 | 1 6 | Ֆիդես Հիփոթեքայ ին Ընկերություն ն ՈՒՎԿ | 521,89 5 | 1 6 | ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ | 450,70 3 | 1 6 | ՍԱԼԱԹԻԱ ՈՒՎԿ | 2,096,8 15 | 1 6 | ՔԱՐԴ Ազրոկրեդի տ ՈՒՎԿ | 1,066,1 05 | 1 6 | Ֆիդես Հիփոթեքայ ին Ընկերություն ն ՈՒՎԿ | 1,449,3 18 |
| 1 7 | ԳԱՈՆԻ ԻՆՎԵՍ ՈՒՎԿ | 58,348 | 1 7 | ՋԻ ԸՆԴ ԷՅ ՈՒՎԿ ՍՊԸ | 517,46 6 | 1 7 | ՆՈՐ ՀՈՐԻՁՈՆ ՈՒՎԿ | 395,47 1 | 1 7 | ՔԱՐԴ Ազրոկրեդի տ ՈՒՎԿ | 1,778,2 92 | 1 7 | Ֆիդես Հիփոթեքայ ին Ընկերություն ն ՈՒՎԿ | 978,91 7 | 1 7 | ԳԱՈՆԻ ԻՆՎԵՍ ՈՒՎԿ | 1,353,3 02 |
| 1 8 | ՔԱՐԴ Ազրոկրեդի տ ՈՒՎԿ | 50,214 | 1 8 | ՖԱՐՍ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ ՈՒՎԿ | 516,81 6 | 1 8 | ՖԱՐՍ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ ՈՒՎԿ | 390,95 7 | 1 8 | Ֆիդես Հիփոթեքայ ին Ընկերություն ն ՈՒՎԿ | 1,500,8 12 | 1 8 | ԷԿՈՒՄԵՆԻԿ ԵԿԵՂԵՑԱԿԱ Ն ՓՈՒՍԱՏՎԱԿ ԱՆ ՖՈՆԴ ՈՒՎԿ | 857,95 5 | 1 8 | ԷԿՈՒՄԵՆԻԿ ԵԿԵՂԵՑԱԿԱ Ն ՓՈՒՍԱՏՎԱԿ ԱՆ ՖՈՆԴ ՈՒՎԿ | 1,220,2 45 |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|--------|--|--------|--------|--|-------------|--------|--|-------------|--------|--|---------------|--------|--|-------------|--------|--|-------------|
| 1 9 | ՖԱՐՄ ԿՐԵՂԻՏ ԱՐՄԵՆԻԱ ՈՒՎԿ | 48,603 | 1 9 | ՆՈՐ ՀՈՐԻՁՈՆ ՈՒՎԿ | 479,56 2 | 1 9 | ԷԿՈՒՄԵՆԻԿ ԵԿԵՂԵՑԱԿԱ Ն ՓՈՒՍԱՏՎԱԿ ԱՆ ՖՈՆԴ ՈՒՎԿ | 369,00 0 | 1 9 | ԷԿՈՒՄԵՆԻԿ ԵԿԵՂԵՑԱԿԱ Ն ՓՈՒՍԱՏՎԱԿ ԱՆ ՖՈՆԴ ՈՒՎԿ | 1,275,5 27 | 1 9 | ԱՐՖԻՆ | 608,27 5 | 1 9 | ԳԼԱԶՈՐ ՈՒՎԿ | 844,42 6 |
| 2 0 | ՆՈՐ ՀՈՐԻՁՈՆ ՈՒՎԿ | 47,636 | 2 0 | ԷԿՈՒՄԵՆԻԿ ԵԿԵՂԵՑԱԿԱ Ն ՓՈՒՍԱՏՎԱԿ ԱՆ ՖՈՆԴ ՈՒՎԿ | 417,57 2 | 2 0 | ՋԻ-ԷՖ-ՍԻ ՋԵՆԵՐԱԼ ՖԱՅՆԵՇԸ ԷՆԴ ԿՐԵՂԻՏ ՔՈՍՓԱՆԻ ՈՒՎԿ | 309,06 0 | 2 0 | ԳԼԱԶՈՐ ՈՒՎԿ | 933,900 | 2 0 | Ֆ.Ի.Կ.Օ. ՈՒՎԿ ՍՊԸ | 508,51 7 | 2 0 | ԱՐՖԻՆ | 768,01 8 |
| 2 1 | ՋԻ-ԷՖ-ՍԻ ՋԵՆԵՐԱԼ ՖԱՅՆԵՇԸ ԷՆԴ ԿՐԵՂԻՏ ՔՈՍՓԱՆԻ ՈՒՎԿ | 42,130 | 2 1 | ՋԻ-ԷՖ-ՍԻ ՋԵՆԵՐԱԼ ՖԱՅՆԵՇԸ ԷՆԴ ԿՐԵՂԻՏ ՔՈՍՓԱՆԻ ՈՒՎԿ | 356,90 3 | 2 1 | Ֆ.Ի.Կ.Օ. ՈՒՎԿ ՍՊԸ | 300,00 0 | 2 1 | Ֆ.Ի.Կ.Օ. ՈՒՎԿ ՍՊԸ | 812,787 | 2 1 | ՋԻ-ԷՖ-ՍԻ ՋԵՆԵՐԱԼ ՖԱՅՆԵՇԸ ԷՆԴ ԿՐԵՂԻՏ ՔՈՍՓԱՆԻ ՈՒՎԿ | 442,95 1 | 2 1 | ՋԻ-ԷՖ-ՍԻ ՋԵՆԵՐԱԼ ՖԱՅՆԵՇԸ ԷՆԴ ԿՐԵՂԻՏ ՔՈՍՓԱՆԻ ՈՒՎԿ | 717,79 7 |
| 2 2 | ՋԻ ԸՆԴ ԷՅ ՈՒՎԿ ՍՊԸ | 39,097 | 2 2 | Ֆ.Ի.Կ.Օ. ՈՒՎԿ ՍՊԸ | 304,27 0 | 2 2 | ԿԻԼԻԿԻԱ ՈՒՎԿ ՍՊԸ | 204,00 0 | 2 2 | ԱՐՖԻՆ | 801,658 | 2 2 | ԱՆԻՎ ՈՒՎԿ | 413,90 4 | 2 2 | ԱՆԻՎ ՈՒՎԿ | 556,82 1 |
| 2 3 | Ֆիդես Հիփոթեքայ իմ Ընկերություն ՈՒՎԿ | 16,847 | 2 3 | ՍԱԼԱԹԻԱ ՈՒՎԿ | 235,85 9 | 2 3 | ԲԼԵՍՍ ՈՒՎԿ | 200,00 0 | 2 3 | ՋԻ-ԷՖ-ՍԻ ՋԵՆԵՐԱԼ ՖԱՅՆԵՇԸ ԷՆԴ ԿՐԵՂԻՏ ՔՈՍՓԱՆԻ ՈՒՎԿ | 799,854 | 2 3 | ԳԼԱԶՈՐ ՈՒՎԿ | 235,61 9 | 2 3 | Ֆ.Ի.Կ.Օ. ՈՒՎԿ ՍՊԸ | 556,03 4 |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|-----------|----------------------------|---------------|-----------|----------------------------|----------------|-----------|----------------------------|----------------|-----------|----------------------------|-----------------|-----------|--|----------------|-----------|----------------------------|----------------|
| 2 4 | Ֆ.Ի.Կ.Օ. ՈՒՎԿ ՍՊԸ | 11,466 | 2 4 | ԱԳՐՈ ԼԻԶԻՆԳ | 218,36 0 | 2 4 | ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍՏ ՈՒՎԿ | 200,00 0 | 2 4 | ԱՆԻՎ ՈՒՎԿ | 632,155 | 2 4 | ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍՏ ՈՒՎԿ | 124,67 4 | 2 4 | ՋԻ ԸՆԴ ԷՅ ՈՒՎԿ ՍՊԸ | 418,40 8 |
| 2 5 | ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍՏ ՈՒՎԿ | 3,983 | 2 5 | ԱՆԻՎ ՈՒՎԿ | 218,25 1 | 2 5 | ԱԳՐՈ ԼԻԶԻՆԳ | 177,55 9 | 2 5 | ՋԻ ԸՆԴ ԷՅ ՈՒՎԿ ՍՊԸ | 539,248 | 2 5 | ԱԳՐՈ ԼԻԶԻՆԳ | 91,649 | 2 5 | ԱԳՐՈ ԼԻԶԻՆԳ | 237,59 2 |
| 2 6 | ՄԱԼԱԹԻՎ ՈՒՎԿ | 3,220 | 2 6 | ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍՏ ՈՒՎԿ | 211,50 6 | 2 6 | ՄԱԼԱԹԻՎ ՈՒՎԿ | 170,00 0 | 2 6 | ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍՏ ՈՒՎԿ | 336,180 | 2 6 | ՋԻ ԸՆԴ ԷՅ ՈՒՎԿ ՍՊԸ | 31,545 | 2 6 | ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍՏ ՈՒՎԿ | 194,55 7 |
| 2 7 | ՅՈՒՆԻԼԻԶԻ ՆԳ | 2,708 | 2 7 | ԿԻԼԻԿԻԱ ՈՒՎԿ ՍՊԸ | 204,37 4 | 2 7 | ՎՏԲ ԼԻԶԻՆԳ ՎԿ | 170,00 0 | 2 7 | ԱԳՐՈ ԼԻԶԻՆԳ | 310,009 | 2 7 | ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՆԵՐԻՆ ՈՒՎԿ ՓԲԸ | 30,168 | 2 7 | ԿԻԼԻԿԻԱ ՈՒՎԿ ՍՊԸ | 183,46 6 |
| 2 8 | ԿԻԼԻԿԻԱ ՈՒՎԿ ՍՊԸ | 1,948 | 2 8 | ԱՐՖԻՆ | 193,38 3 | 2 8 | ԱՆԻՎ ՈՒՎԿ | 170,00 0 | 2 8 | ԿԻԼԻԿԻԱ ՈՒՎԿ ՍՊԸ | 204,844 | 2 8 | ՎՏԲ ԼԻԶԻՆԳ ՎԿ | 2,873 | 2 8 | ՅՈՒՆԻԼԻԶԻ ՆԳ | 73,546 |
| 2 9 | ԱՆԻՎ ՈՒՎԿ | (2,513) | 2 9 | ՎՏԲ ԼԻԶԻՆԳ ՎԿ | 133,97 2 | 2 9 | ՅՈՒՆԻԼԻԶԻ ՆԳ | 120,00 0 | 2 9 | ՎՏԲ ԼԻԶԻՆԳ ՎԿ | 136,845 | 2 9 | ՅՈՒՆԻԼԻԶԻ ՆԳ | 496 | 2 9 | ԱԳՐԱ ԼԻԶԻՆԳ | - |
| 3 0 | ՎՏԲ ԼԻԶԻՆԳ ՎԿ | (31,87 0) | 3 0 | ՅՈՒՆԻԼԻԶԻ ՆԳ | 132,33 7 | 3 0 | ԱՐՖԻՆ | 100,00 0 | 3 0 | ՅՈՒՆԻԼԻԶԻ ՆԳ | 132,833 | 3 0 | ԿԻԼԻԿԻԱ ՈՒՎԿ ՍՊԸ | 470 | 3 0 | ՎՏԲ ԼԻԶԻՆԳ ՎԿ | - |
| ԸՆԴԱՄԵՆՆՐ | | 5,279, 922 | ԸՆԴԱՄԵՆՆՐ | | 48,792, 549 | ԸՆԴԱՄԵՆՆՐ | | 36,262, 773 | ԸՆԴԱՄԵՆՆՐ | | 120,936 ,469 | ԸՆԴԱՄԵՆՆՐ | | 72,153, 682 | ԸՆԴԱՄԵՆՆՐ | | 89,558, 484 |